ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 06>> << փետրվար >> 2017 թ N 25

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀՀ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԱՁՈՐԻ ՅՈՒ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 34-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ <<Վայոց ձորի մարզի Ագարակաձորի ՅՈՒ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահի 2017 թվականի փետրվարի 2-ի թիվ7 գրությունը, Նաիրա Հովհաննիսյանի հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 29-ի N333 ժամկետային աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը և Նաիրա Հովհաննիսյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.2017 թվականի փետրվարի 6-ից Նաիրա Հովհաննիսյանին նշանակել ՀՀ <<Վայոց ձորի մարզի Ագարակաձորի ՅՈՒ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2017 թվականի փետրվարի 6-ից լուծել Նաիրա Հովհաննիսյանի հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 29-ի N333 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ